

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2022

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍ 7

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարրերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց բողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ճնարությը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ճնարությունը: Պատասխանների ճնարութիւնը ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1 Ի՞նչ բաժիններ են տարրերում ձկների ողնաշարում.

- 1) կրծքագոտկային և պոչային
- 2) իրանային և պոչային
- 3) պարանոցային, իրանային և պոչային
- 4) պարանոցային, կրծքագոտկային, սրբանային և պոչային

2 Ինչո՞վ է տարրերվում օղակավոր որդերի մարսողական համակարգը տափակ որդերի մարսողական համակարգից.

- 1) ունեն կերակրափող, կտնառք, ստամոքս
- 2) չունեն կլան, հետնաղին ավարտվում է հետաճըռով
- 3) աղիները ճյուղավորված են, ավարտվում են կոյանցով
- 4) ունեն լյարդ և ենթաստամոքսային գեղձ

3 Խմորասնկերի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) բազմաբջիջ են
- 2) ունեն քլորոֆիլ
- 3) միքսոտրոֆ են
- 4) էուկարիոտ են

4 Ի՞նչը բնորոշ չէ միաշաքիլավորների մեծամասնությանը.

- 1) էնդոսպերմում պաշարանյութերի կուտակումը
- 2) առանցքային արմատային համակարգը
- 3) տերևների աղեղնաջիղ ջղավորությունը
- 4) սերմնամաշկի դժվար անջատումը

5 Ո՞ր սեռահասուն կենդանին չունի կոյանց.

- 1) ճարպիկ մողեսը
- 2) լճագորտը
- 3) ճագարը
- 4) բաղակլուցը

6 Որտե՞ղ են բացվում միջատների մալախիզյան անոքները.

- 1) հետնաղու սկզբնամասում
- 2) արտաքին միջավայրում
- 3) մարմնի խոռոչում
- 4) ճարպային մարմնում

7

Ինչպե՞ս է տեղի ունենում մարդու սրտի աշխատանքի հումորալ կարգավորումը.

- 1) աղբենալինը և կալիումի իոններն արագացնում են, իսկ կալցիումի իոնները և ացետիլխոլինը դանդաղեցնում են սրտի աշխատանքը
- 2) աղբենալինը և ացետիլխոլինն արագացնում են, իսկ կալցիումի և կալիումի իոնները դանդաղեցնում են սրտի աշխատանքը
- 3) աղբենալինը և կալցիումի իոնները դանդաղեցնում են, իսկ կալիումի իոնները և ացետիլխոլինն արագացնում են սրտի աշխատանքը
- 4) աղբենալինը և կալցիումի իոններն արագացնում են, իսկ կալիումի իոնները և ացետիլխոլինը դանդաղեցնում են սրտի աշխատանքը

8

Որտե՞ղ են տեղակայված մարդու մաշկային ընկալիչները.

- 1) Ենթամաշկային բջջանքի տարրեր շերտերում
- 2) Վերնամաշկի ստորին շերտում և ենթամաշկային բջջանքում
- 3) բուն մաշկում
- 4) Վերնամաշկում

9

Ո՞ր ռեֆլեքսն է բարդ.

- 1) հազ
- 2) վազք
- 3) ծնկային
- 4) փոշտոց

10

Մարդու երիկամների զարկերակներով որքա՞ն արյուն է անցնում մեկ օրվա ընթացքում.

- 1) 150-170 լ
- 2) 1500-1700լ
- 3) 2000լ
- 4) 1,5-2 լ

11

Մարդու գլխուղեղի մեծ կիսագնդերի կեղևի ո՞ր բլթում է զտնվում ճշգրիտ շարժումների գոտին.

- 1) ճակատային
- 2) քունքային
- 3) գագաթային
- 4) ծոծրակային

12

Ի՞նչը մարդու տեսողական վերլուծիչի օժանդակ հարմարանք չէ.

- 1) բարթիչավոր մարմինը
- 2) ակնագունդը շարժող մկանները
- 3) շաղկապենին
- 4) արցունքագեղձերը

13

Մարդու ո՞ր ուսկորներն են միացած սերտաճման միջոցով.

- 1) ողնաշարի գոտկային բաժնի ողերը
- 2) վերին և ստորին ծնունդերը
- 3) կրծոսկրը և կողոսկրերը
- 4) ողնաշարի սրբանային բաժնի ողերը

14

Ո՞ր նյութերի ճեղքումը կխանգարվի մարդու օրգանիզմում ստամոքսահյութի հիմնայնացման դեպքում.

- 1) ածխաջրերի
- 2) նուկլեինաքրուների
- 3) սպիտակուցների
- 4) ճարպերի

15

Ո՞ր պնդումն է ճիշտ վիտամին B₁-ի վերաբերյալ.

- 1) ջրալույծ է, ավիտամինոզի դեպքում զարգանում է չարորակ սակավարյունություն
- 2) հանդիսանում է էներգիայի աղբյուր, թերվիտամինոզի դեպքում խթանվում է ռոդրպսինի սինթեզը
- 3) թերվիտամինոզի կամ ավիտամինոզի դեպքում զարգանում է թերի-թերի հիվանդությունը, ջրալույծ է
- 4) թերվիտամինոզի կամ ավիտամինոզի դեպքում զարգանում են մաշկի և լորձաթաղանթների խոցեր, ճարպալույծ է

16

Ո՞րն է էրիթրոցիտների հիմնական գործառույթը.

- 1) անորթների պատերի հաստացման կանխարգելումը
- 2) բթվածնի և ածխաքրու զազի փոխադրումը
- 3) արյան թանձրուկի առաջացումը
- 4) վարակների դեմ պայքարը

17

Ինչպե՞ս է կոչվում իմունիտետի այն տեսակը, որն առաջանում է կարմրուկով հիվանդանալու հետևանքով.

- 1) բնական ձեռքբերովի
- 2) արհեստական ակտիվ
- 3) բնական բնածին
- 4) արհեստական պասիվ

18

Մարդու հաճգիստ ներշնչման ժամանակ օդի ի՞նչ քանակ է մասնակցում գազափոխանակությանը թոքերում.

- 1) 3500 սմ^3
- 2) 1200 սմ^3
- 3) 360 սմ^3
- 4) 500 սմ^3

19

Թաղանքային կառուցվածք չունեցող օրգանիզմների քվին են պատկանում.

- 1) ոիբոսմներն ու բջջային կենտրոնը
- 2) ոիբոսմներն ու միտոքոնդրիումները
- 3) Գոլջիի ապարատն ու ոիբոսմները
- 4) լիզոսմներն ու վակուոլները

20

Ի-ՌՆԹ-ում նուկլեոտիդների ո՞ր եռյակն է համապատասխանում ԴՆԹ-ի ԱԹԳ եռյակին.

- 1) ΟՒԱԳ
- 2) ԱՍՑ
- 3) ԱԹՑ
- 4) ΟՒԱՑ

21

Ո՞ր գործառույթն է իրականացնում ռիբոսմը.

- 1) սպիտակուցի կենսասինթեզ
- 2) ածխաջրերի կենսասինթեզ
- 3) ճարպերի փոխադրում
- 4) ածխաջրերի ճեղքավորում

22

Ո՞ր հիվանդության հարուցիչը չի պատկանում պրոկարիոտներին.

- 1) խոլերայի
- 2) կարմրուկի
- 3) տիֆի
- 4) անգինայի

23

Հետևյալ գործընթացներից ո՞րն է տեղի ունենում բջջակորիզում.

- 1) ԴՆԹ-ի սինթեզը
- 2) սպիտակուցի սինթեզը
- 3) ֆոտոսինթեզը
- 4) ԱԵՖ-ի սինթեզը

24

Ինչպես են բազմանում սպորավոր նախակենդանիները.

- 1) զռոսպորների միջոցով
- 2) բազմակի կիսման միջոցով
- 3) բողբոջմամբ
- 4) սպորների միջոցով

25

Ի՞նչ է գենոտիպը.

- 1) սեռական քրոմոսոմներում գտնվող գեների ամբողջությունը
- 2) մեկ քրոմոսոմում գտնվող գեների ամբողջությունը
- 3) X քրոմոսոմում գտնվող գեների ամբողջությունը
- 4) օրգանիզմի բոլոր գեների ամբողջությունը

26

Ի՞նչ է ռեակցիայի նորման.

- 1) տարվա ընթացքում ջերմաստիճանի փոփոխության սահմանները
- 2) հատկանիշի մուտացիոն փոփոխականության սահմանները
- 3) տվյալ գենի որոշակի հատկածի փոփոխության չափը
- 4) հատկանիշի մոդիֆիկացիոն փոփոխականության սահմանները

27

Ի՞նչ է տեղի ունենում, եթե սկզբնական սեռական բջիջները անցնում են սերմնարանի աճման գոտի.

- 1) տեղի է ունենում ԴՆԹ-ի կրկնապատկում, և բջիջը վերածվում է առաջին կարգի սպերմատոցիտի
- 2) տեղի է ունենում ԴՆԹ-ի կրկնապատկում և բջիջների կիսում միտոզով
- 3) տեղի է ունենում ԴՆԹ-ի կրկնապատկում և բջիջների կիսում մեյոզով
- 4) կիսում են և վերածվում առաջին կարգի օվոցիտների

28

Ի՞նչ է գեների կոմպլեմենտար ազդեցությունը.

- 1) շրայակցված գեների փոխաներգործությունը
- 2) մեկ ալելային գույզի փոխաներգործությունը
- 3) գերդոմինանտությունը պայմանավորող գույզերի փոխաներգործությունը
- 4) տարբեր ալելային գույզերի փոխաներգործությունը

29

Ինչպիսի՞ արդյունք է ստացվում երկիետերողիզոտ առանձնյակի և հոմոզիգոտ դոմինանտ առանձնյակի խաչաերման արդյունքում՝ երկու ալելներով էլ լրիվ դոմինանտության և գեների անկախ բաշխման դեպքում.

- 1) 2 ֆենոտիպային և 4 գենոտիպային խմբեր
- 2) 1 ֆենոտիպային և 4 գենոտիպային խմբեր
- 3) 2 ֆենոտիպային և 2 գենոտիպային խմբեր
- 4) 4 ֆենոտիպային և 4 գենոտիպային խմբեր

30

Ի՞նչն է բնորոշ ազրուկոհամակարգերին.

- 1) լրացուցիչ էներգիայի կարիք չունեն
- 2) դոմինանտ տեսակները բնական ընտրության արդյունք են
- 3) խախտված է բնական հավասարակշռությունը
- 4) օժտված են ինքնակարգավորմամբ

31

Կենդանի նյութի ո՞ր ֆունկցիայի հետ է կապված ծծմքի և երկարի հանքերի առաջացումը.

- 1) դեստրուկտիվ
- 2) կուտակող
- 3) միջավայրագոյացնող
- 4) էներգիական

32

Նշվածներից որո՞նք են համարվում ռուդիմենտներ.

- 1) մարդու մատների արանքում թաղանքների առկայությունը
- 2) մարդու առջը, լրացուցիչ պտուկները
- 3) մարդու ականջային և մաշկային մկանները
- 4) ձկների և խեցգետինների խոիկները

33

Եկոլոգիական գործոններից ո՞րն է կենսածին.

- 1) ջրի քիմիական կազմությունը
- 2) քամու արագությունը
- 3) օրվա տևողությունը
- 4) միջատներով բույսերի փոշոտումը

34

Առանձնյակներին մեկ պոպուլյացիայի մեջ միավորող գործոններից ո՞րն է զլիավորը.

- 1) ազատ խաչաերման հնարավորությունը
- 2) ընդհանուր թշնամիների առկայությունը
- 3) սեռահասուն և ոչ սեռահասուն առանձնյակների փոխհարաբերությունները
- 4) ժամանակի ընթացքում առանձնյակների միմյանց նմանվելը

35

Ո՞ր պնդումն է ճիշտ գիշատչության վերաբերյալ.

- 1) բույսերի գիշատչությունը զարգացել է որպես ազոտի և այլ կարևոր տարրերի մշտական անբավարարության փոխհատուցման ձև
- 2) գիշատիչները չեն կարող լինել երկրորդ կարգի կոնսումենտներ
- 3) գիշատիչ սնկերը չեն կարող ազդել հողում իրենց գոհերի՝ նեմատոդների թվաքանակի վրա
- 4) գիշատիչ բույսերը կարող են կարգավորել միջատների թվաքանակը

36

Ո՞ր կենսացենոզն է բնութագրվում տեսակային առավել մեծ քազմազանությամբ.

- 1) տափաստանների
- 2) արևադարձային անտառների
- 3) տունդրայի
- 4) անապատի

(37-38) Սրտի բոլորաշրջանը տևում է 0,8 վրկ: Առողջ մարդու հարաբերական հանգստի վիճակում սրտի փորոքների բուլացման տևողությունը կազմել է 20 րոպե:

37

Քանի՞ վրկ է կազմել նախասրտերի կծկումը.

- 1) 150
- 2) 96
- 3) 240
- 4) 60

38

Քանի՞ լիտր արյուն է մղվել մեծ շրջանառություն, եթե մեկ փորոքի կողմից շրջանառություն մղված արյան ծավալը 70 մլ է.

- 1) 84
- 2) 168
- 3) 42
- 4) 105

(39-40) Գլուկոզի մեղքումից հետո օրգանիզմում մնացել է 10 մոլ կաթնաթռու, և առաջացել է 318 մոլ ջուր: 1 մոլ գլուկոզից մինչև կաթնաթռու մեղքման ընդհանուր էներգիան կազմում է 200 կՋուլ, իսկ ԱԵՖ-ից ԱԵՖ-ի սինթեզի համար անհրաժեշտ է 30 կՋուլ/մոլ էներգիա:

39

Քանի՞ մոլ ԱԵՖ է սինթեզվել այդ ընթացքում.

- 1) 304
- 2) 290
- 3) 276
- 4) 260

40

Հաշվել ամբողջ պրոցեսի օգտակար գործողության գործակիցը.

- 1) 42,4%
- 2) 45,2%
- 3) 39,7%
- 4) 40,2%

41

Ո՞ր օրգանական միացությունը (նշված է ձախ սյունակում) ածխաջրի ո՞ր խմբին (նշված է աջ սյունակում) է համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Օրգանական միացություն

Ածխաջրի խումբ

- | | |
|-----------------|------------------|
| A. զիկոգեն | 1. բազմաշաքարներ |
| B. զյուկող | 2. միաշաքարներ |
| C. քաղանթանյութ | |
| D. խիտին | |
| E. ֆրուկտոզ | |
| F. ռիբոզ | |
| G. էրիթրոզ | |
| H. գալակտոզ | |

42

Ո՞ր կենդանուն (նշված է աջ սյունակում) ո՞ր բնորոշումն է (նշված է ձախ սյունակում) համապատասխանում: Նշել ճիշտ համապատասխանությունը.

Բնորոշում

Կենդանի

- | | |
|---|-----------|
| A. ունեն երկխորշ՝ գեղձային և մկանային ստամոքս | 1. աղավնի |
| B. զոտկային և սրբանային ողերը սերտաճել են | 2. զորտ |
| C. պարանոցը կազմված է մեկ ողից | |
| D. շնչում է քոքերով և մաշկով | |
| E. արյունը թթվածնով հարստանում է ներշնչման և արտաշնչման ժամանակ | |
| F. մաշկը մերկ է, հարուստ է լորձ արտադրող գեղձերով | |
| G. կողոսկրեր չունի | |
| H. սիրտը եռախորշ է | |

43

Սարդու ո՞ր ուսկորը (նշված է ձախ սյունակում) կմախրի ո՞ր բաժնի կազմի մեջ է (նշված է աջ սյունակում) մտնում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Ուսկոր

Կմախրի բաժին

- | | |
|---------------|-------------------------|
| A. անրակ | 1. ստորին ազատ վերջույթ |
| B. բազկոսկր | 2. իրան |
| C. կող | 3. ստորին վերջութի զոտի |
| D. բիակ | 4. վերին ազատ վերջույթ |
| E. կոնքոսկր | 5. վերին վերջույթի զոտի |
| F. վեզ | |
| G. ճաճանչոսկր | |
| H. կրծոսկր | |

44

Մարդու արյան շրջանառության համակարգում առկա ո՞ր փականների գործառույթները (նշված են ձախ սյունակում) ո՞ր փականներին (նշված են աջ սյունակում) են համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Փականների գործառույթներ

Փականներ

- | | |
|--|-----------------|
| A. խոչընդոտում են արյան հետադարձ շարժմանը ձախ փորոքից ձախ նախասիրտ | 1. կիսալուսնաձև |
| B. ապահովում են արյան միակողմանի հոսքը երակներում | 2. երկփեղկ |
| C. գտնվում են ձախ փորոքի և առրտայի միջև | 3. եռափեղկ |
| D. շարակցահյուսվածքային թելիկներով ամրացած են աջ փորոքի պատերին | |
| E. խոչընդոտում են արյան հետադարձ շարժմանը թոքային զարկերակից դեպի սիրտ | |

45

Ինչպիսի՞ն է փոփոխականության ձևի (նշված է աջ սյունակում) և բերված օրինակների (նշված է ձախ սյունակում) համապատասխանությունը: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Օրինակներ

Փոփոխականության ձև

- | | |
|--|---------------------------------|
| A. աշնանը տերևների գույնի փոփոխություն | 1. գենային մուտացիա |
| B. տրիստմիա | 2. գենոմային մուտացիա |
| C. ֆիզիկական մեծ բեռնվածությունների ժամանակ մկանների զանգվածի աճ | 3. համակցական փոփոխականություն |
| D. նուկլեոտիդների մեկ գույգի փոխարինում | 4. ֆենոտիպային փոփոխականություն |
| E. հապլոիդիա | |
| F. պոլիպեպտիդային շղթայի ամինաթթվի փոխարինում | |
| G. բեղմնավորման ժամանակ գամետների պատահական զուգակցում | |

46

Ինչպիսի՞ն է պրոցեսների հաջորդականությունը կենդանական օրգանիզմում սպիտակուցի մոլեկուլի առաջացման ժամանակ.

1. հիդրոֆոր փոխազդեցությունների և -S-S- կովալենտ կապերի առաջացում
2. սպիտակուցների ներմուծում օրգանիզմ
3. պեպտիդային կապերի առաջացում
4. հիդրոֆոր փոխազդեցությունների և -S-S- կովալենտ կապերի քայրայում
5. ջրածնային կապերի առաջացում
6. ամինաթթուների ներմուծում բջիջ
7. պեպտիդային կապերի քայրայում
8. սպիտակուցի տարածական կառուցվածքի խախտում
9. ջրածնային կապերի քայրայում

47

Ի՞նչ հաջորդականությամբ է ազդակն անցնում ռեֆլեքսային աղեղով մարդու օրգանիզմում: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. ողնուղեղային հանգույց
2. ողնուղեղի առջևի եղջյուր
3. շարժողական նեյրոնի աքսոն
4. ներդիր նեյրոն
5. զգայական նեյրոնի դենդրիտ
6. գործառող օրգան
7. զգայական նեյրոնի աքսոն
8. ընկալիչ

48

Ի՞նչ հաջորդականությամբ են իրականանում արյան մակարդման գործընթացները մարդու օրգանիզմում: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. թրոմբոցիտների հպում արյունատար անոթի անհարթ մակերևույթին
2. արյան պլազմայի մեջ թրոմբինի արտազատում
3. արյունատար անոթի պատի վնասում
4. թրոմբի առաջացում
5. ֆիբրինոգենի բնափոխում
6. թրոմբոցիտների քայրայում
7. ֆիբրինի առաջացում

49

Ի՞նչ հաջորդականությամբ են ընթանում գործառույթները մարդու օրգանիզմում մեզի առաջացման և միզարձակման ժամանակ: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. Երկրորդային մեզի անցում երիկամի ավագան
2. Միզապարկի պատերի մկանների կծկում
3. Մեզի անցում միզածորան
4. Միզարձակում
5. Մեզի կուտակում միզապարկում
6. Միզապարկի պատերի ընկալիչների դրդում

50

Ինչպիսի՞ն է պրոցեսների հաջորդականությունը՝ ուղեսիվ մուտացիաների առաջացումից մինչև նրանց՝ ֆենոտիպում արտահայտվելը: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. Ուղեսիվ մուտացիայի առաջացում
2. ըստ մուտանտ գենի՝ հոմոզիգոտ ձևի առաջացում
3. Ուղեսիվ մուտացիա կրող օրգանիզմում գամետների առաջացում
4. Մուտացիայի արտահայտում ֆենոտիպում
5. Ուղեսիվ մուտացիայի տարածում
6. Ուղեսիվ մուտացիա կրող գամետների միաձուլում
7. նուկլեոտիդների երկու գույզի փոխարինում

51

Ի՞նչ հաջորդականությամբ են տեղի ունենում պրոցեսները՝ բակտերիաֆագով բակտերիայի վարակման ժամանակ: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. նոր բակտերիաֆագերի ձևավորում
2. բակտերիաֆագի ԴՆԹ-ի սինթեզ
3. բակտերիայի ոչնչացում
4. բակտերիաֆագի ԴՆԹ-ի ներարկում բակտերիայի մեջ
5. պոչային ելունների ամրացում բջջաբաղանթին
6. բակտերիաֆագի սպիտակուցների սինթեզ
7. բջջաբաղանթի «լուծում»

Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. լիալիդները մասնակցում են մարդու մակերիկամների հորմոնների կենսասինթեզին
2. վիրուսները պատկանում են նախակորիզավորների վերնաթագավորությանը
3. մկանային բջիջների ցիտոպլազմայում պահպանվում է կալցիումի իոնների շատ բարձր խտություն՝ հատիկավոր էնդոպլազմային ցանցի կազմավորած սարկոպլազմային ցանցի շնորհիվ
4. շրջակա միջավայրում նատրիումի իոնների պարունակությունն ավելին է, քան կենդանի բջիջներում, իսկ կալիումի իոնների պարունակությունը կենդանի բջիջներում է ավելին, քան շրջակա միջավայրում
5. ծխախոտի խճանկարային հիվանդություն հարուցող վիրուսի մասնիկը ձողաձև է, իսկ ծխախոտի նեկրոզի վիրուսը գնդիկային տեսքով կառույց է
6. ֆոտոսինթեզի մթնային փուլում ածխածնի օքսիդը ֆիքսվում է ոիքուլոզաբիֆոսֆատ-կարբօքսիլազ ֆերմենտի միջոցով, որի արդյունքում առաջանում է վեցածխածնային միացություն
7. ԴՆԹ-ի մեկ շղթայում աղենինային նուկլեոտիդի քանակը միշտ հավասար է թիմինային նուկլեոտիդի քանակին

Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. X քրոմոսոմը կոչվում է իգական քրոմոսոմ
2. լոռողնիլ պտղաճանճի աչքերի գունավորումը սերի հետ շղթայակցված հատկանիշ է, որը պայմանավորող գենը գտնվում է X քրոմոսոմում
3. առաջին սերնդում 1:1 հարաբերությունն ըստ ֆենոտիպի ստացվում է այն լեպուս, երբ ծնողական առանձնյակներից մեկը հոմոզիգոտ է՝ ըստ ռեցեսիվ ալելի, մյուսը՝ հետերոզիգոտ
4. համաձայն Թ.Սորգանի՝ պտղաճանճի երկինտերոզիգոտ էզի և ռեցեսիվ հատկանիշներով արուի խաչասերման արդյունքում սերնդում կստացվի չորս ֆենոտիպ՝ յուրաքանչյուրից 25 %
5. գեներատիվ մուտացիաները սերնդում չեն դրսեորդվում
6. Գ.Սենդելի կատարած փորձերում դեղին գույնի և ողորկ սերմեր ունեցող ոլորի հնարավոր գենոտիպերի թիվը հավասար է չորսի

54

Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. լողափամփուշտը նպաստում է ձկների լսողությանը
2. կաթնասուններն ունեն առտայի միայն աջ աղեղ, որը դուրս է գալիս ձախ փորոքից
3. քաղցրահամ ջրերի պոլիա հիդրան բաժանասեռ է
4. մաշկի միջոցով ջուրն արտաքին միջավայրից թափանցում է երկկենցաղի օրգանիզմ
5. ինֆուզորիաները բազմանում են սպորներով և կոնյուգացիայի եղանակով
6. խիտինը, մանանը պոլիսախարիդներ են, կազմում են սնկերի քջապատը
7. միջատները բաժանասեռ են, բազմանում են ինչպես անսեռ, այնպես էլ սեռական ճանապարհով, բեղմնավորումն արտաքին է

55

Նշել մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող բոլոր ճիշտ պնդումները.

1. միջին ականջում ասպանդակը հպվում է կլոր պատուհանի թաղանթին
2. միջին ականջը հեղուկով լցված փոքրիկ խոռոչ է
3. աղբենալինը բարձրացնում է արյան ճնշումը, նեղացնում արյան անորները
4. ենթամաշկային քջանքը պաշտպանում է մարմինը սառեցումից՝ փոքրացնելով զերմատվությունը
5. մարդու շնչառական ուղիների էպիթելային բջիջները և ձվատարների բջիջները ունեն թարթիչներ
6. մարդու առանցքային կմախքն են կազմում գանգը և իրանի կմախքը
7. հոտն ընկալվում է արտաշնչման պահին

56

Նշել բոլոր սխալ պնդումները.

1. մեյոզի առաջին և երկրորդ բաժանումների միջև ընկած ժամանակաշրջանում ԴՆԹ-ն չի կրկնապատկվում
2. միտոզի մետաֆազի ժամանակ ցենտրիուլները միմյանցից հեռանում են դեպի քջի հակադիր քետոներ, և նրանց միջև ձևավորվում է բաժանման իլիկը
3. հետսաղմնային ուղղակի զարգացումը բնորոշ է միջատներին
4. ավտոտրոֆ են երկարաբակտերիաները, ծծմբարակտերիաները
5. հոմոլոգ քրոմոսոմների կոնյուգացիան տեղի է ունենում մեյոզի առաջին բաժանման թելոֆազում
6. կենդանիների ձվաքիզն ունի երկու քետո՝ անհմալ և վեգետատիվ, որն արտահայտվում է սպերմատոզուզի ներթափանցման հատվածով

57

Նշել բոլոր սխալ պնդումները.

1. զուգահեռությունն էվոլյուցիոն փոփոխություն է, որի արդյունքում ազգակից օրգանիզմների մոտ առաջանում են նմանատիպ հատկանիշներ
2. կրկնորդ տեսակներն ազատ խաչասերվում և բեղում սերունդ են տալիս
3. ներտեսակային գոյության կովի օրինակ է գորշ առնետի կողմից սև առնետի դուրս մղումը Եվրոպայի բնակավայրերից
4. տեսակի ձևաբանական չափանիշի հիմքում ընկած է մի տեսակի առանձնյակների արտաքին և ներքին կառուցվածքի նմանությունը
5. բնական ընտրությունը էվոլյուցիայի շարժիչ ուժ է
6. մակրոէվոլյուցիան ավարտվում է նոր տեսակի առաջացմամբ
7. բնական ընտրությունն ուղղորդում է էվոլյուցիային

58

Նշել մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող բոլոր սխալ պնդումները.

1. պայմանական ռեֆլեքսներն առաջանում են գլխուղեղի մեծ կիսագնդերի կեղևի տարրեր մասերի միջև ձևավորված ժամանակավոր կապերի միջոցով
2. քրի խոռոչի վերին մասում գտնվում են հոտառական ընկալիչներ
3. առրտան արյունատար համակարգի ամենախոշոր զարկերակն է, որը սկիզբ է առնում աջ փորոքից
4. բազկի երկգլուխ և եռագլուխ մկանները հակազդիչներ են
5. ձկնամկանը տեղակայված է բազկային հողի վերևում
6. միջկողային և ստոծանու մկանների թուլացման ժամանակ կողոսկրերն ու ստոծանին իջնում են և տեղի է ունենում արտաշնչում
7. ավիշը երկու մեծ ծորաններով թափվում է ձախ փորոք

(59-60) Զերմահաղորդմամբ մաշկի միջոցով հեռանում է զերմության մինչև 15%-ը, իսկ գոլորշիացումով՝ զերմության 20%-ը: Օրվա ընթացքում զերմահաղորդմամբ մարմնից հեռացել է 1470 կՎ էներգիա, իսկ մարմնի մակերեսը 2 մ² է:

59

Քանի՞ կՎ էներգիա է հեռացել օրգանիզմից գոլորշիացմամբ:

60

Քանի՞ միլիզրամ քրտինք գոլորշիացավ մաշկի 1 սմ² մակերևույթից, եթե 1 զրամ քրտինքի գոլորշիացման համար ծախսվում է 2,45 կՎ էներգիա:

(61-62) 100 օրվա ընթացքում (միջինը 15-ժամյա լուսային օր) ֆոտոսինթեզի պրոցեսում արտադրվել է 64 կգ O₂:

61

Գտնել ծառի տերևային մակերևույթի մակերեսը (մ²):

62

Որքա՞ն օրգանական նյութ (գլյուկոզ) է սինթեզվել այդ ընթացքում (կգ):

(63-65) Սպիտակուցի զանգվածը 132000 գ.ա.մ. է:

- 63 Որոշել՝ քանի՞ անգամ է այդ սպիտակուցի սինթեզը կողավորող գենի զանգվածը գերազանցում սպիտակուցի զանգվածը, եթե մեկ ամինաքրվային մնացորդի միջին մոլեկուլային զանգվածը 120 գ.ա.մ. է, մեկ նուկլեոտիդինը՝ 300 գ.ա.մ.։
- 64 Գտնել տվյալ գենի երկարությունը (նմ), եթե մեկ նուկլեոտիդի երկարությունը 0,34 նանոմետր է։
- 65 Քանի՞ աղենինային նուկլեոտիդ կա տվյալ գենում, եթե հայտնի է, որ գուանինային նուկլեոտիդների թիվը 1,75 անգամ մեծ է աղենինային նուկլեոտիդների թվից։

(66-68) Շագանակագույն աչքերով, արյան երկրորդ խմբով, ուղիղ մազերով տղամարդն ամուսնացավ երկնագույն աչքերով, արյան երրորդ խմբով, ալիքաձև մազերով կնոջ հետ: Այդ ընտանիքում ծնվեց երկնագույն աչքերով, արյան առաջին խմբով, ուղիղ մազերով երեխա: Ալիքաձև մազերը ստացվում են որպես միջանկյալ հատկանիշ, եթք ծնողներից մեկն ունի գանգուր մազեր, մյուսը՝ ուղիղ:

66

Գտնել գանգուր մազերով երեխա ծնվելու հավանականությունը (%-ով):

67

Որոշել այդ ընտանիքում շագանակագույն աչքերով, արյան երկրորդ խմբով և ալիքաձև մազերով երեխա ծնվելու հավանականությունը (%-ով): Պատասխանը բազմապատկել 100-ով:

68

Քանի՞ տեսակի գենոտիպով երեխաներ կարող են ծնվել տվյալ ընտանիքում, եթե նշված հատկանիշները պայմանավորող գեները գտնվում են հոմոլոգ քրոմոսոմների տարբեր գույգերում:

69

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «Ծիշտ է», «Սխալ է», «Զգիտեմ» պատասխաններից մեկը.

1. Վարսանդի սերմնարանում մեզասպորը երեք միտոտիկ բաժանումներից հետո սկիզբ է տալիս ուր հապլոիդ կորիզներ պարունակող սաղմնապարկին
2. Գոշեհատիկում միկրոսպորը սկզբում կիսվում է մեյոզով, առաջացնելով հապլոիդ վեգետատիվ բջիջ, որը կիսվում է մեյոզով և առաջանում են չորս հապլոիդ հավաքակազմով սպերմիումներ
3. Վարսանդի սպիի վրա գոշեհատիկը ծլում է և առաջացնում է սաղմնապարկ
4. Լրկնակի բեղմնավորման արդյունքում սաղմնապարկից ձևավորվում է սերմը
5. Գոշեխողովակը զարգանում է գեներատիվ բջջից
6. Վարսանդի սերմնարանում դիպլոիդ հավաքակազմով բջջից մեյոտիկ բաժանման արդյունքում առաջանում են հապլոիդ հավաքակազմով չորս բջիջներ

70

Մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «Ծիշտ է», «Սխալ է», «Զգիտեմ» պատասխաններից մեկը.

1. Կլլման գործընթացը տեղի է ունենում այն ժամանակ, երբ կծկվում են ըմպանի և լեզվի հարթ մկանները
2. Քավիկը աղիքի պատի ելուն է, որի պատը կազմված է հարթ մկանահյուսվածքի նուրբ շերտից և ծածկված է բազմաշերտ էպիթելով
3. Լեղածորամանվ լեղին լեղապարկից անցնում է ենթաստամոքսային գեղձ և ակտիվացնում ճարպերը ճեղքող ֆերմենտները
4. Պարասիմպարիկ նյարդային համակարգի նյարդերով հաղորդվող նյարդային ազդակներն ակտիվացնում են լեղու արտադրությունը
5. Ենթաստամոքսային գեղձի հյութն անգույն է, օժտված է թթվային հատկությամբ
6. Ատամոքսում տարբերում են օղակադիր, երկայնակի, թեք մկաններ